

**ԴԱՐՁՎԱԾՔԻ ԸՆԲՈՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԻԲՐԵՎ ԿՐՏՍԵՐ  
ԴՊՐՈՅԱԿԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՅՑՔԻ ԸՆԴԱՅԱՅՆԱՎԱՐ  
ԴԱՐՄԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ**

**Վ. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ  
Բանասիրական գիտությունների թեկնածու, ԳՊԴ դասախոս**

Կրտսեր դպրոցում լեզվական ցանկացած միավորի ուսուցման նպատակը նախ սովորողների շրջանում գիտելիքի սերմանումն է, ապա նրա ամրապնդումը, որն էլ իր հերթին ապահովում է լեզվի հնարավորինս տեղին և անթերի գործածություն։ Այն է՝ լեզվական միավորների ճիշտ համադրմանը սեղմ և բովանդակալից կապակցված խոսք կառուցելու և այն առօրյայում կիրառելու կարողության ձևավորում։ Այդ առումով անժխտելի է մայրենի լեզվի տարրական ուսուցման դասընթացի ծանրակշիռ ներք։ «Մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ տվյալ ժողովրդի գրական կենդանի լեզվի ուսուցումն է, աշակերտի մեջ խոսքի կուլտուրայի մշակումն ու զարգացումը, այլապես չի կարող լինել լիարժեք կրթություն կամ դաստիարակություն» [16, 403]:

Կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման գործում կարևորվում է լեզվի դարձվածային միավորների ուսուցումը՝ դրանք դիտելով նախ և առաջ իրու կրտսեր դպրոցականի աշխարհմկալման, մտահորիզոնի ընդլայնման և բառապաշտի հարստացման միջոցներ։

Դարձվածքի ըմբռնման, ինչպես նաև սահմանման վերաբերյալ լեզվաբանության մեջ առկա են բազմաթիվ բնորոշումներ և սահմանումներ։ Պ. Բերդիրյանը, օրինակ, գրում է, որ «դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած» [1, 5]։ Մեկ այլ բնորոշմանը՝ «Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով անբողջական, վերահիմնաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իրուն լեզվական պատրաստի միավոր» [14, 335]:

Լ. Եգեկյանը գրում է, որ դարձվածքը երկու և ավելի բառերի այնպիսի կայուն, պատրաստի բառակապակցություն է, որի բաղադրիչները վերահիմնաստավորված են, այսինքն՝ դարձվածքի բաղադրիչներից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ չի պահպանում իր բառարանային բուն իմաստը և ծեռք է

բերում նոր նշանակություն, ուրեմն և՝ տվյալ դարձվածքի արտահայտած ինաստը այդ բաղադրիչների մեխանիկական գումարը չէ [6, 197]:

Վերջին շրջանի լեզվաբանական գրականության մեջ Երևույթն ավելի սեղմ բնորոշմանը է ներկայացվում, ինչպես. «Դարձվածքը փոխաբերության վրա հիմնված կայուն բառակապակցություն է» [9, 114]:

L. Խաչատրյանի մեկնաբանությամբ «դարձվածքները կայուն կապակցություններ են, պատրաստի, վերարտադրելի կառույցներ՝ բառերի փոխաբերական իմաստներով, որոնց բաղադրիչների շարահյուսական կապը հաճախ մթագնած է լինում» [8, 179]:

Դժվար չէ նկատել, որ ըստ էության վերոբերյալ սահմանումները բովանդակային առումով գրեթե չեն տարրերվում: Թերևս տարրերությունը պայմանավորված է ծևակերպումներով, ինմանիշ բառերի յուրովի ընտրությամբ: Լեզվաբանության մեջ, անշուշտ, կարևորվում է նաև դարձվածքների ոճական արժեքը: Դրանք դիտվում են իբրև լեզվի պատկերավորման միջոցներ, որոնք խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզական երանգագործում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը [6, 196]:

Անդրադառնալով տարրական դասարաններում դարձվածքների ուսուցման խնդրին՝ նշենք, որ դպրոցական դասագրերում դարձվածքները ներկայացվում են իբրև կայուն բառակապակցություններ, որոնք «պատրաստի նոցվում են խոսքի մեջ, ոչ թե ստեղծվում են խոսելու պահին» [4, 111]: Նույն տեղում բերվում են հետևյալ օրինակները՝ **ծայմը գլուխը գցել** «գոռօգոռալ», **գլխի ընկնել** «հասկանալ», **սիրտ առնել** «համարձակվել» և այլն: Նշվում է նաև, որ դարձվածքներն աշխույժ ու դիպուկ են դարձնում խոսքը: Պետք է նկատել, որ դարձվածքները բավարար չափով ներկայացված են տարրական դասարանների գործող դասագրերում: Սակայն դրանց բնորոշումն ու սահմանումը տրվում է միայն 4-րդ դասարանում:

Մեթոդական գրականության մեջ, անշուշտ, կարևորվում է դարձվածքանական միավորների ուսուցումը տարրական դասարաններում: Կարևորելով նշված միավորների դերը խոսքի զարգացման և հարստացման գործում՝ Զ. Գյուլամիրյանը միաժամանակ իրավացիորեն նշում է, որ տարրական դասարանների նայրենի դասագրերում ընդգրկված դարձվածքներն անպայման պետք է բացատրվեն [3, 304]:

Կարծում ենք, որ իսկապես մեծ աշխատանք պետք է կատարվի դասարանում՝ ուսուցչի անմիջական մասնակցությամբ: Այդ առումով ունենք մի քանի նկատառումներ:

Դպրոցական դասընթացում պետք է ուշադրություն դարձնել լեզվական միավորի սահմանմանն ու անվանմանը: Քանզի ինչպես լեզվաբանական գրականության մեջ, այնպես էլ դասագրքերում, այս հարցում կարծես թե միօրինակություն չկա: Որոշ դասագրքերում դրանք հանդես են գալիս **դարձված**, իսկ որոշ դասագրքերում էլ՝ **դարձվածք** կամ **դարձվածային միավոր** անվանումներով: Սա, անշուշտ, պայմանավորված է լեզվաբանական տարրեր մոտեցումներով: Այսպես՝ Ա. Սուրբիասյանը և Ս. Գալստյանը «Դայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» (Ե., 1975) գործածում են **դարձված** եզրույթը, թեև ավելի ուշ Ա. Սուրբիասյանը «Ժամանակակից հայոց լեզու» (Ե., 1989) գրքում գործածում է **դարձվածք** տարրերակը:

Վերջին շրջանի լեզվաբանության մեջ առավել հաճախ գործածվում է **դարձվածք** եզրույթը, որին իրու հոմանիշներ գործածվում են **դարձվածային միավոր**, **իդիոմատիկ արտահայտություն** կապակցությունները: Մինչդեռ դարձվածք և **դարձվածք** բառերի դեպքում հոմանիշությունը ճիշտ չէ, կարծում ենք: Դպրոցական դասագրքերում, առավել ևս տարրական դասարաններում լեզվաբանական եզրույթների զուգածն գործածությունները պետք է բացառել: Ուսումնասիրվող միավորի պարագայում դա շփորությունների առիթ է դառնում, մանավանդ երբ հետազայում՝ միշտն և բարձր դասարաններում, աշակերտն սկսում է **դերբայական դարձվածի** ուսումնասիրությունը: Ուստի ավելորդ մոլորություններից նրան ազատելու համար նպատակահարմար է բացառապես գործածել **դարձվածք** եզրույթը: Այստեղ պետք է հաշվի առնել նաև տարիքային առանձնահատկություններով պայմանավորված այն փաստը, որ երեխան վաղ հասակում ավելի ընկալունակ է և տպավորվող:

Երկրորդ կարևոր հանգամանքը դարձվածքների ընտրության հարցն է: Անշուշտ, դրանք հիմնականում դուրս են բերվում այն բնագրերից և ընթերցանության նյութերից, որոնք հրամցվում են դպրոցականներին դասագրքերի և լրացուցիչ ընթերցանության գրքերի, հարցարանների միջոցով, որոնց պակասն այսօր հաճելիորեն չի զգացվում: Սակայն դրանցից շատերը, որքան էլ բացատրվեն և մեկնաբանվեն, սովորողների համար հաճախ դժվարընկալելի են և չիհշվող: Ուստի զուգահեռաբար պետք է ներկայացվեն նաև այնպիսի օրինակներ, որոնք նախ հեշտությամբ կընկալվեն և կմտապահվեն, մյուս կողմից էլ երեխային կմղեն ընթերցանության և ընտրովի նյութի կարդալուն: Այս գործում, անշուշտ, մեծ է դասավանդող ուսուցչի դերը:

**«Դարձվածք»** թեման անցնելիս ուսուցիչն ինքը պետք է ընտրի համապատասխան օրինակներ՝ ելնելով դասարանի ընդհանուր հետաքրքրություններից, տարիքային առանձնահատկություններից և հնարավորություններից:

Այսպես՝ **Քաջ Նազար** բառակապակցության օրինակով երեխային շատ ավելի հեշտ կլինի բացատրել լեզվական նշված միավորը, ներկայացնել, որ այն ամենից առաջ բառակապակցություն է, որը բառացի, ուղիղ իմաստով նշանակում է «քաջ, արի Նազար», սակայն հերոսի հայտնի «արժանիքներով» պայմանավորված՝ այն իբրև պատրաստի միավոր գործածվում է «վախտկոտ նարդ» փոխարերական իմաստով և չի բխում **քաջ** և **Նազար** բաղադրիչների իմաստների մեխանիկական գումարից: Անշուշտ, անհրաժեշտություն կառաջանա ընթերցելու կամ վերընթերցելու համանուն հերթաքը, որը կտպավորվի երեխայի հիշողության մեջ և, կարծում ենք, այլև շփոթություն չի առաջացնի դարձվածքի ընթանան հարցում: Դրանից հետո մյուս օրինակների հարցը շատ ավելի հեշտությամբ կլուծվի: Այլ կերպ ասած՝ նյութը մատուցելիս ցանկալի է բերել այնպիսի օրինակներ, որոնք ունեն իրենց հետաքրքրաշարժ պատմությունը և կմղեն աշակերտին դեպի ընթերցանություն, դեպի հերթաքների կախարդական աշխարհ՝ դրանով իսկ նպաստելով նրա աշխարհայացքի ընդլայնմանն ու բառապաշարի զարգացմանը: Քանզի «խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներն անհնար է պատկերացնել առանց ընթերցանության, քանի որ ընթերցանությունը մտածողության և մտավոր զարգացման ակունքներից մեկն է» [7, 28]:

Նույն հաջողությամբ կարելի է ներկայացնել **ծախորդ Փամու** «անհաջողակ մարդ», **արիլլեսյան գարշապար** «բուլը, խոցելի տեղ» և նմանատիպ այլ դարձվածքներ ժողովրդական բանահյուսությունից, դիցարանությունից, հեթիքաթներից և այլ աղբյուրներից: Ուշադրություն պետք է դարձնել նաև դրանց ուղղագրական առանձնահատկություններին (խոսքն այս դեպքում բաղադրյալ հատուկ անուններին է վերաբերում): Անհրաժշտ է պարզաբանել դարձվածքների առաջացման աղբյուրները՝ դրանք գուգորդելով համապատասխան ընթերցումների, նկարազարդ պաստառների ցուցադրման հետ:

Նմանատիպ աշխատանքները կրտսեր դպրոցականին կնախապատրաստեն դարձվածքի հետագա ուսումնասիրություններին, որոնք արվում են միջին դասարաններում: Այսպես՝ «Մայրենի - 6» դասագրքում նշվում է, որ «շատ դարձվածքներ առաջացել են գրական տարբեր ստեղծագործություններից», և բերվում են մի շաբթ օրինակներ, ինչպես՝ **քաջ Նազարի բախսոն ունենալ** «պատահարար կամ հանգամանքների բերումով հաջողության հասնել», **կոտրած տաշտակի առաջ կամդմել** «նախսկին թշվար վիճակի մեջ հայտնել»:

և այլն [5, 78-79]: Իսկ բերված վարժություններից մեկում պահանջվում է գտնել ամրան Յուսի, քաջ Նազար, ծախորդ Փամոս, շուն ու կատու դառնալ և այլ դարձվածքների առաջացման արյուղները [5, 81]:

Այլ կերպ ասած՝ նշված լեզվական իրողությունը բացատրելիս պետք է ընտրել երեխային հետաքրքրող օրինակներ: Այլապես նույնը դժվար է անել, ասենք, **գիշի ընկմել**, **աշխարհով մեկ լիմել**, **գիշից մեծ գործ քռնել** և այլ դարձվածքների օրինակով: Նյութը ամրապնդելու գործում մեծապես կօգնի նաև երեխաների կողմից փոքրիկ կապակցված խոսք կազմելը, որի համար իրեն վերնագիր կգործածվեն տարրեր դարձվածքներ, որոնք կառաջարկվեն ուսուցչի կողմից կամ կընտրվեն աշակերտների կողմից, ինչպես՝ **փորձանքի մեջ ընկմել** «դժբախտություն պատահել», **քամու բերած** «հեշտությամբ ձեռք բերած», **օճր բնից հանել** «ճարտար լեզու ունենալ» և այլն:

Տարրական դասարանների դասագրքերում գործածված դարձվածքներից են նաև **բերանք ջուր առնել** «լուր մնալ, ոչ մի բառ չասել», **հինգ մատի պես գիտենալ** «շատ լավ իմանալ» [11, 35], **եփած հավի ծիծաղ կգա** (ասում են այն ժամանակ, եթե մեկն ամիս բաներ է ասում կամ անում) [11, 38], **քրտինք թափել** «քրտնաջան, անդադար աշխատել» [12, 10], **թևեր պարզել** «ոգնորել, հույս տալ» [12, 28], **աքլորակրիվ տալ** «անմտորեն կրվել, աքլորանալ, վիճարանելով աղմուկ հանել» [12, 65], **շունչը փշել** «մեռնել, մահանալ, հոգին ավանդել» [12, 85], **համբերությունը կորցնել** «այլև չկարողանալ սպասել, չդիմանալ» [12, 125]: Այս առումով, ի դեպ, կարող են օգտակար լինել ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված ձեռնարկները և հարցարանները<sup>1</sup>:

Ներկայացնենք մեկ դասի օրինակ՝ մեր ասելիքն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով:

«**Դարձվածք**» թեման անցնելիս ընտրում ենք Յովիաննես Թումանյանի «Զախորդ Փանոսի հեքիաթը»<sup>2</sup>, որը քաջածանոթ է կրտսեր դպրոցականների շրջանում թե՛ իրեն հեքիաթ, թե՛ իրեն մոլուքֆիլմ: Ընտրում ենք բացատրական ընթերցանության մերողը, որը մերողական գրականության մեջ ներկայացվում է հետևյալ բաղադրամասերով՝ 1. գրուց, 2. բնագրի ընթերցում, 3. բառային աշխատանք, 4. պատմում, 5. ամփոփում [3, 118]:

<sup>1</sup> Տե՛ս Գալստյան Ա., Խարազան Ռ., Ավազյան Լ., Բալայան Ա., Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարաններ, Ե. 2010, 2011, 2012: Քյուրքյան Ա., Տեր -Գրիգորյան Լ., «Յեքիաթների իմ աշխարհը», Ե., 2010: Գալստյան Ա., Խարազան Ռ., Բալայան Ա., «Յայոց լեզվի հարցարանների ժողովածու», Ե., 2011:

<sup>2</sup> Տե՛ս Յովի. Թումանյան, Յեքիաթներ, Ե., 1985:

Ելնելով մեր նպատակադրվածությունից, որն է՝ **Զախորդ Փանոս** կապակցությունն իբրև դարձվածք ներկայացնելը, ընտրում ենք զրույցի **տեղեկատվական** տեսակը, որպեսզի նախապես տեղեկություններ հաղործենք ներկայացվող լեզվական նյութի վերաբերյալ և փորձենք այն բացատրել հեթիաթի ընթերցման միջոցով: Անշուշտ, նախապատրաստական զրույցը կծավալվի հեթիաթի շուրջ: Նախ հարց ու պատասխանի միջոցով պարզում ենք, թե ինչ բնույթի ստեղծագործություն է հեթիաթը, և արդյո՞ք բոլորին ծանոթ է «Զախորդ Փանոսի հեթիաթը»: Վերիշում ենք, որ **հեթիաթը** ժողովրդական ստեղծագործություն է, որի մեջ մարդիկ և դեմքերը պատկերվում են չափազանցված կամ այլարանորեն, հաճախ էլ հրաշապատում գծերով [ 10, 187]:

Վերադառնալով մեր ընտրած հեթիաթին՝ համառոտ ներկայացնում ենք նրա բովանդակությունը, ապա անցնում **ըմբերցման** փուլին՝ նախապես նպատակ ունենալով պարզել հերոսի իրական կերպարը, ապա վեր հանել նրա անվան այլարանական նշանակությունը և այդպիսով հասնել դարձվածքի՝ իբրև լեզվական միավորի բնորոշմանը: **Բառային աշխատանք** կատարելիս բացի հեթիաթի հերոսի անվանումից ուշադրություն ենք դարձնում նաև այն կայուն բառակապակցություններին, որոնք իբրև պատրաստի միավորներ են գործածված և ունեն փոխարերական իմաստ: Ուստի բնագրի ընթերցումն ուղեկցվում է նշված կապակցությունների բացահայտմամբ և մեկնարանությամբ: Ուշադրություն ենք դարձնում նաև հեթիաթում գործածված մի շարք բառերի վրա, որոնք ներկայացված են ոչ թե գրական, այլ ժողովորական տարրերակներով: Բացատրում ենք, որ դա բնորոշ է ժողովրդական ստեղծագործություններին առհասարակ և յուրահատուկ հմայք է հաղորդում խոսքի՝ դարձնելով այն ավելի գումեր ու պատկերավոր: Անշուշտ, միասին որոշում ենք դրանց գրական համարժեքները, ինչպես՝ **սել -սայլ, փետ - փայտ, դու մի ասիլ - դու մի ասա, կնկանս - կնոշս, ախպորիցս - եղբորիցս, տանըցիք - տանեցիները, եստեղ - այստեղ** և այլն:

Անդրադառնում ենք նաև անծանոթ բառերի բացատրությանը, որոնք ևս հիմնականում բարբառային դրսևորում են ստացել (Ենթադրվող բառերից են՝ **մեծաոր\*** «իրավերք, մեծարանքի ճաշ», **ծուռ\*** «ոտք», **վեր ածե\*** «քափել, գետին գցել», **քելեխ\*** «հոգեհաց», **գեղահաված\*** «գյուղովի, ամբողջ գյուղով» և այլն):

Հաջորդ քայլը դարձվածքներին անդրադառնալ է: Միասին առանձնացնում ենք հետևյալ կայուն բառակապակցություններ՝ **Զախորդ Փանոս** «անհաջողակ մարդ» [15, 375], **ձախ գնալ** «անհաջողության մատնվել, ձախողդ-

վել» [15, 375], **տակովն անել** «սուզվել, խորտակվել» [15, 555], **ճամփա դնկ-նել** «ճանապարհ ելնել» [15, 397], **գուշը քառը** «ինչ ուզում է, թող լինի» [15, 167], **ուս Փանոս, ուսն Փանոս** «այսինչին ամեն տեղ փնտրեց...ու չգտավ» [2, 384], **առանց երկար ու բարակ մտածելու** «առանց տատանվելու» [15, 61]: Պարզում ենք, թե որո՞նք են դրանց ուղղակի իմաստները, որո՞նք՝ փոխարե-րական:

Ի դեպ, կարևոր է նաև այն բառակապակցությունների հարցը, որոնք ու-նեն երկակի կիրառություն՝ թե՛ ուղղակի, թե՛ փոխարերական իմաստներով: Այսպես՝ բնագրում ուղղի իմաստով գործածված է **աչքը հանել** «աչքը տեղից հանել, կուրացնել» բառակապակցությունը, որը կարող է ունենալ նաև դարձ-վածյախն արժեք՝ 1) «մեկին մեծ վնաս տալ», 2) «վախեցնել» [15, 44] իմաստ-ներով:

Այս ամենը կատարելուց հետո անցնում ենք բնագիրը համառոտ պատ-մելուն, որից հետո ամփոփում ենք դասը՝ գործածելով **քառարածան** մեթոդը [13, 74]: Աշակերտները փակ աչքերով լսում են հարց կամ հարցեր և տալիս պատասխաններ, որոնք, բնականաբար, կլինեն շատ տարբեր, երբեմն՝ զվար-ճալի: Օրինակ՝

<b>Ի՞նչ լսեցի</b> <u>- Զախորդ Փանոս</u>	<b>Ի՞նչ տեսա</b> <ol style="list-style-type: none"> <li><u><b>Փանոսը լճից դուրս է եկել և տեսմում է՝ շորերը չկամ:</b></u></li> <li><u><b>Փանոսը եղրոր տաճ դրան ճեղքից նայում է:</b></u></li> <li><u><b>Փանոսը կաղայով գնում է:</b></u></li> <li><u><b>Փանոսին ուկրոռով խփեցին, աչքը հա-նեցին:</b></u></li> </ol>
<b>Ի՞նչ զգացի</b> <ol style="list-style-type: none"> <li><u><b>-Խղճացի Փանոսին:</b></u></li> <li><u><b>-Տխրեցի:</b></u></li> <li><u><b>-Ծիծաղս եկալ:</b></u></li> </ol>	Փոխարիմող բար կամ բառակապակ-ցություն <ol style="list-style-type: none"> <li><u><b>Ամուղեղ մարդ:</b></u></li> <li><u><b>Կորած մարդ:</b></u></li> <li><u><b>Ամհաջողակը:</b></u></li> </ol>

Վերջում կրկին բացատրում ենք, թե ի՞նչ է դարձվածքը, և իրը տնային աշխատանք՝ հանձնարարում ենք գրել փոքրիկ շարադրություն՝ հեթիաթում գործածված դարձվածքներից որևէ մեկը դարձնելով վերնագիր: Կարելի է նաև

բոլոր դարձվածքներով գրել փոքրիկ պատմություն կամ պարզապես նկարել հեքիաթի հերոսին: Այս նկարների մեջ մասը կլինի ծիծաղաշարժ և զվարճալի, որոնց օրինակները ևս կան միջին դասարանների դասագրքերում՝ իբրև կատակ – նկարներ [5, 81]:

Ամփոփելով՝ նշենք, որ դարձվածքի ուսումնասիրության արդյունավետությունը տարրական դասարաններում մեծապես պայմանավորված է ընտրված օրինակներով, դրանց ճիշտ մեկնաբանություններով, որոնց միջոցով կարելի է զարգացնել դպրոցականի խոսքը, ընդլայնել նրա աշխարհայացք:

Բանայի բառեր - դարձվածք, բնագիր

\* Նշված բառերի բացատրությունները տրված են ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի», հի. 1, 3, 4, Ե., 1969, 1974, 1980, և Ստ. Մալխաչյանից «Հայերեն բացատրական բառարանի», հ. 3, Ե., 2010 (տե՛ս էջ 7):

## Օգտագործված գրականություն

- Բժիշկան Պ. Ս., ժամանակակից հայերենի դարձվածարանություն, Ե., 1973:
  - Բժիշկան Պ. Ս., Նայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2011:
  - Գյուլամիրյան Զ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., 2009:
  - Գյուրջինյան, Գ. Կերերյան Ն., Մայրենի - 4, Երևան, 2010:
  - Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Վեճքանյան Թ., Մայրենի - 6, Ե., 2010:
  - Եղելյան Լ., Հայոց լեզու, Ե., 2005:
  - Խարազյան Ռ. Փ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Ե., 2003:
  - Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
  - Խլդաքյան Ֆ., ժամանակակից հայոց լեզու, Բ., Ե., 2008 :
  - Զրբաշյան Էլ., Մախչանյան Ր., Գրականագիտական բառարան, Ե., 1980:
  - Սարգսյան Վ. Ա., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Ր., Մայրենի - 2, Ե., 2011:
  - Սարգսյան Վ. Ա., Խաչատրյան Ր., Թորոսյան Կ., Զիլավյան Ե., Մայրենի - 3, Ե., 2011:
  - Սարուխանյան Ս., Ղալլաքյան Ա., Ղիշաղաջյան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, Վարժություններ, Վանաձոր, 2008:
  - Սուրիհասյան Ա., ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989:

15. Սուրբիասյան Ա. Ա., Գալստյան Ա. Ա., Յայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
16. Տեր-Գրիգորյան Ա., Յայոց լեզվի մեթոդիկա, Ե., 1980:

THE INTERPRETATION OF IDIOM AND ITS TEACHING | LEARNING AS AN  
IMPORTANT FACTOR OF MIND BROADENING AND VOCABULARY  
ENRICHING OF ELEMENTARY SCHOOL LEARNER

V. A. NERSISYAN

*Candidate of Philology,*

*GSU lecturer*

The interpretation of idiom in Armenian linguistics and its teaching peculiarities at elementary school are presented in the article.

The role of the teaching | learning of idioms as a factor of mind broadening and vocabulary enriching of an elementary school learner investigated.

ВОСПРИЯТИЕ ФРАЗЕОЛОГИЗМА И ЕГО ИЗУЧЕНИЕ КАК ВАЖНЫЙ  
ФАКТОР РАСШИРЕНИЯ МИРОВОЗЗРЕНИЯ И ОБОГОЩЕНИЯ  
ЛЕКСИКИ УЧАЩЕГОСЯ НАЧАЛЬНОЙ ШКОЛЫ

B. A. НЕРСИСЯН

*Кандидат филологических наук,  
преподаватель ГГУ*

В статье рассмотрены вопрос восприятия фразеологизма в армянском языкоznании, а также некоторые особенности его изучения в начальной школе.

В статье также представлена роль изучения фразеологизма как фактора расширения мировоззрения и обогащения лексики учащегося начальной школы.